

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ ԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«Մշակ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն
և մէկ և տասն ամսական՝ 9 ռ., ինն և ութ ամսական՝ 8 ռ., եօթ ամսական՝ 7 ռ., վեց ամսական՝
6 ռ., հինգ ամսական՝ 5 ռ., չորս ամսական՝ 4 ռ., երեք ամսական՝ 3 ռ., երկու ամսական՝ 2 ռ., մի
ամսական՝ 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղարայան և Բարոնիսկայա փողոցի անկիւն):
Ուրիշ քաղաքներից պէտք է գիտնել այս հասցեն. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԳԱՌՈՒԹԻՒՆ

Մեր սովորական անտարբերութիւնը. Հա-
մակերկր օրինագիծ. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Ամենալաւ միջոցը. Քաղաքագլխի ընտրութիւնը
երևանում. Նամակ Արաբաբաբեցի. Նամակ Ա-
լեքսանդրօպօլից. Նամակ Թէլալից. Նամակ Ա-
լեքսանդրօպօլից. Նամակ Թէլալից. Նամակ Ա-
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նոր խաղեր և նոր առիթներ.
Իրէյֆուտի գործի չուրջը. Կրեմլական հարցը.
Նամակ Պարսկաստանից. Նամակ Բոլղարիայից.
Նամակ Պարսկաստանից. Նամակ Բոլղարիայից.
Նամակ Պարսկաստանից. Նամակ Բոլղարիայից.
Նամակ Պարսկաստանից. Նամակ Բոլղարիայից.
Նամակ Պարսկաստանից. Նամակ Բոլղարիայից.

ՄԵՐ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Մենք սիրում ենք պարծենալ մեր հա-
սարակական հիմնարկութիւններով, բայց
ոչ մի ջանք չենք գործ դնում նրանց գոր-
ծունէութիւնը զարգացնելու և ձփռացնե-
լու համար: Ուղեորութիւնն օգտին ուրա-
խութեամբ գրվում ենք անգամ այդ հիմ-
նարկութիւնների, ընտրում ենք վարու-
թեան կամ խորհրդի անդամներ և կար-
ծես հետաքրքրվում ենք հիմնարկութեան
կենսով: Բայց անցնում են մի քանի տա-
րիներ, իսկ երբեմն միայն մի քանի ամիս-
ներ և հետք չէ մնում մեր մասնակցու-
թեան և հետաքրքրութեան: Մոռանում
ենք հիմնարկութիւնը, մոռանում ենք մեզ
վրա՝ իբրև անդամների վրա դրած պար-
տաւորութիւնները և նոյն իսկ չենք վե-
րանորոգում մեր անդամակցութիւնը՝ տա-
լով ընկերութեան այն փոքրիկ վճարը, որ
մենք մտցրինք ընկերութեան նախահաշուի
մէջ՝ ծախսելու համար:

Ահա՛ երեք-չորս տարի է, որ սովի և
ուրիշ դժբաղդութիւնների պատճառով մեր
երկրից լքվել է բազմաթիւ աղքատներով
և մուրաքիկներով: Այդ թշուառներին
պէտք է օգնել, նրանց պէտք է պատասխա-
րան, հազնելը և ուսելը հայթայթել:
Ո՞ր պէտք է օգնել նրանց: Հասարակու-
թիւնը գործնականապէս շատ թեթեւ կեր-
պով է ազատում իր օձիքը լուրջ հոգսից
և ուղարկում է խեղճերին Բարեգործական
ընկերութիւն կամ յաճախ նոյն իսկ դե-
պի խմբագրատուն: Բայց միթէ դա ան-
բարեխղճութիւն չէ մեր հասարակութեան
կողմէն: Ինքը ոչ մի կոպեկ չէ ուղարկում
Բարեգործական ընկերութեան, ինքը ոչ
մի ջանք չէ գործ դնում հարստացնելու
ընկերութեան դրամարկը, իսկ հեշտու-
թեամբ ցոյց է տալիս ընկերութեան կամ
խմբագրութեան դռները: Նիւթ դանկան
ողորմա՛ծ թագուհին, որ նորերն առնու-
թիւ հովանաւորութեան տակ առած չը լի-
նէր մեր երկրում ապաստան գտած փա-
խտական հայերին և առատ գումար ու-
ղարկած չը լինէր նրանց համար Բարե-
գործական ընկերութեան, ինչ պէտք է
անէին այդ թշուառ մարդիկը, որոնցից
պէտք է գանձին հաց և ուրիշ անհրա-
ժեշտ պիտոյքներ:

Կամ միթէ աւելի լաւ վիճակի մէջ են
մեր միւս հիմնարկութիւնները, որոնք կըր-
թական նպատակներ ունեն: Ի՞նչ է իսկա-

պէս ցոյց տալիս գրքերի հրատարակու-
թեան գործը: Մեր ընթերցող հասարա-
կութեան խղճալի գրութիւնը: Մի գիրք,
որ տպվում է 1200 օրինակ, սպասում է
երեք-չորս, երբեմն նոյն իսկ տասն տարի,
որպէս զի սպառվի և պէտք չգալի նոր
հրատարակութեան: Մենք աչքի առաջ
ունենք այն գրքերը, որոնք սիրված են
ժողովրդից և որոնց վերաբերութեամբ
պահանջներ են լսվում հասարակութեան
մէջ: Թէ՛ Պարոնեանի աշխատութիւնները,
թէ՛ Նեկսպիրի թարգմանութիւնները և
թէ՛ գնահատան յայտնի եւրոպական վէպեր և
գրուածքներ մնում են ամբողջ տարիներ
և սպառվում են շատ դանդաղ կերպով:
Իսկ տեսքը, որչափ կեղծաւոր ֆրազներ
են լսվում մեր շուրջը՝ թէ պէտք է տա-
րածել գրքեր գրեւորում, պէտք է աշխա-
տել, որ դպրոցից դուրս եկած գրեւորակն
տղաներ ձեռքներին ունենան գրքեր՝ սո-
վորածը չը մոռանալու և զարգանալու
համար: Եւ այդ բոլորի հետ միասին ոչ
ոչ չէ ուղում ինքը իր կողմից նպաստել
այս կամ այն գրեւոր՝ տալով նրան միջոց
գիրք ձեռք բերել, ոչ ոք չէ յատկացնում
որոշ գումարներ՝ գրադարաններ կազ-
մելու համար:

Շատ քիչ են մեր հասարակական հիմ-
նարկութիւնները, բայց և այնպէս նրանց
էլ ծաղկած գրութեան մէջ չենք պահպա-
նում: Զբաղված մեր անձնական նեղ գոր-
ծերով և մոռացութեան տալով մեր հա-
սարակական պարտաւորութիւնները, մենք
մեզ մատնում ենք հասարակական մեռե-
լութեան, որ ի հարկէ առանց ազդեցու-
թեան չի մնայ ապագայում. Ժամանակ չէ՛
սթափվելու:

ՀԱՍՏԱԿՐԵԼԻ ՕՐԻՆԱԳԻԾ

Ինչպէս յայտնի է, այժմ գործող քաղաքային
ինքնավարութեան կանոնադրութիւնն ընտրողա-
կան ձայնի իրաւունքը տալիս է միայն այն ան-
ձանց, որոնք ունեն կալուածական ցենզը: Այդ
հանգամանքից առաջանում է այն անյարմա-
րութիւնը և անարդարութիւնը, որ մի որ և է
տղաւ, անարդարացած խառնուկայան, վաճառա-
կան իրաւունք ունի ընտրել և ընտրվել, հնա-
րաւորութիւն ունի մասնակցել քաղաքային ինք-
նավարութեան գործերին իբրև ձայնաւոր, իբրև
քաղաքային վարչութեան անդամ, որովհետև նա
ունի տուն կամ որ և է մի կալուածք, իսկ մի
ինտելլիգենտ անձն զրկված է ընտրելու և
ընտրվելու իրաւունքից, որովհետև չունի կա-
լուածք: Այդ է պատճառ, որ շատ քաղաքներում
ձայնաւորներ ընտրվում են տղաւ, միանգա-
մայն անգրագետ անձինք, իսկ շատ ինտելլի-
գենտ անձինք զրկված են հնարաւորութիւնից
ընտրվելու ձայնաւոր: Դրանից ստատիկ վնաս-
վում է և քաղաքային ինքնավարութեան գործը,
որովհետև իրանց կրթութեամբ և պատրաստու-
թեամբ գործելու ձեռնհաս և կարող անձինք տուն
կամ կալուածք չունենալու պատճառով չեն կա-
րողանում մասնակցութիւն ունենալ քաղաքային

ինքնավարութեան գործում: Այդ անյարմարու-
թեան առաջին առնելու միակ հնարն այն է հա-
մարվում, որ ընտրողական իրաւունքը տրվի ոչ
միայն կալուածական ցենզ ունեցողներին, այլ և
ընակաւորներին, այսինքն այն անձանց, որոնք
ապրում են վարձովի բնակարաններում, վճա-
րելով որոշ վարձագին: Եւ եթէ ի նկատի ունե-
նանք, որ այդ պայմանների մէջ գտնվում են
ինտելլիգենտ անձինք—ուսուցիչներ, պաշտօնեա-
ներ, գրողներ և այլախնայներ թիւը, մասնա-
կանը մեծ քաղաքներում, ահապէս է, պէտք է
առնել, որ քաղաքային ինքնավարութեան գոր-
ծից արեւետաւական կերպով հեռացվում է մի
տարր, որ շատ և շատ օգտակար կարող էր լի-
նել նրան:

Այժմ, ինչպէս հայտնի է, մայրաքաղաքի լի-
րագրները, այդ անյարմարութիւնը շուտով պէտք
է վերանայ: Ֆինանսների միւնիստրութիւնը այս
օրերս ներկայացրել է պետական խորհրդին մի
օրինակով, որով արեւելական բնակարանական
հարկի ստացումը պէտք է յանձնվի այսուհետև
քաղաքային ինքնավարութեան և բնակարանի
վարձ վճարողներին պէտք է տրվի ընտրողական
իրաւունք: Նիւթ այդ բեֆօրմն իրագործվի, տա-
րարաւոր չը կայ, որ քաղաքային ինքնավարու-
թիւնը կը մտնի մի նոր, աւելի արդիւնաւոր
չըլձի մէջ և կը իրված, ինտելլիգենտ ոչմեր
այլ ևս չեն քվի ինքնավարութեան առպարէլից,
որ չէ կարողանում շատ տեղերում զարգանալ՝
զիւրաւարապէս տգէտ տարրի ձեռքում գտնվե-
լու պատճառով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՍԵՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԸ

Այնպատար դասակարգը, որ գոյութեան կըն-
ւի մէջ ենթարկված է հազար ու մի աննպատա
պայմանների և ներկայացնում է մի միջնավայր,
որ աւելի հեղուկութեամբ և լայն չափերով հիմք
են բռնում ամեն տեսակ դժբաղդութիւնները,
լուսաւորված երկրներում հետզհետէ սովորում է
ձեռք վերցնել գանդատաւորի, աղաւորի դերից և
աշխատում է իրական միջոցներով թիթեացնել
իր գրութիւնը: Վարդից է, որ փոխադարձ
օգնութիւնն ընդունվել է իբրև այդ միջոց-
ներից ամենալաւը: Այդ փորձը, դժբաղդաբար,
դեռ շատ չէ ընդհանրացած, ամեն մի հասարա-
կութիւն չէ կարող հասկանալ փոխադարձ
օգնութեան անհրաժեշտութիւնը և օգտակարու-
թիւնը. դա կարելի է նրա զարգացման առ-
տիճանից: Անպատարաւոր, տղաւ հասարակու-
թիւնների համար իւրաքանչիւր փորձանք երկնքի
պատիժ է համարվում և դժբաղդութեան ճան-
կերում այլադրական իւրաքանչիւր մարդու հա-
մար մի ճանապարհ ունի պատրաստած—մու-
րացկանութիւն: Թէ ինչ վարձուրեք իրաւունք
թիւն է մուրացկանութիւնը ամբողջ մարդկու-
թեան համար—այդ ամենքին է յայտնի: Բայց
շատ շատերը չը գիտեն, որ փոխադարձ օգնու-
թիւնը կազմում է աշխարհը այդ դժբաղդութիւ-
նից, քանի որ նա է, որ, այսպէս ասած, ցա-
մաքցնում է մուրացկանութեան աղբիւրները:
Մէկը միւսին օգնելը—դա է փրկութեան ամեն
նախա ճանապարհը: Բայց երբ պիտի մենք սո-
վորենք այդպիսի ճանապարհ բաց անել մեր սե-
փական երջանկութեան համար:

Նորերս Խաղաղութիւն մի համետ ընկերութիւն,
որի նպատակն է փոխադարձ օգնութեամբ ապա-
հովել իր անդամների գրութիւնը, տօնաց իր
գոյութեան քան և հինգ ամեակը: Անդամների
թիւը 600-ի է հասնում. բայց այդ համետ կաղ-
մակերպութիւնը 25 տարւայ ընթացքում ցոյց է
տուել վերին աստիճանի միջնակարգի, օրինա-
կելի գործունէութիւն. նա ոչ միայն մաքաւել
է հիւանդութիւնների, կարօտութեան, աղքա-
տութեան դէմ, ոչ միայն դպրոցներ է պահել,
այլ և կարողացել է 40 հազար ֆրանկ դրամա-
ղլու կազմել: Ինքօրնութեան այդ փոքրիկ գոր-
ծը յանձնարարականների, քաղաքայինների
կարօտ չէ, պէտք է միայն ընդօրինակել նրան,
իւրացնել: Իւրաքանչիւր քաղաքում, գիւղում,

արդիւնաբերական կենտրոնում գտնվում են մի
և նոյն շրջանին, մի և նոյն դրաղմունքին պատկա-
նող, մի և նոյն հանգամանքների մէջ ապրող շատ
աշխատաւորներ: Նիւթ դրանք միմյան ընկերակ-
ցութեան սկզբունքով, միմեանց օգնեն, մի-
մեանց թե ու թիկունք դառնան, դժբաղդ պայ-
մանները կոչնչանան: Մի երկր, որ պատած
կը լինի այդպիսի ընկերակցութիւնների խիտ
ցանցով, կարող է պարծենալ, որ ինքը իրա-
գործել է ժամանակակից ամենաբարձր հարցե-
րից մէկը լուծուած: Այդպիսի երկրը իրաւունք
ունի երջանկի համարվելու...

ՔԱՂԱՔԱԳԼԻ ԸՆԴՈՒՆՎՈՐՆԵՐ ՆԵՐԿԱՅՈՒՄ

II
Ներքին, հոկտեմբերի 1-ին
Թէպէտ քաղաքագլխի ընտրութիւնը մինչև
այսօր դեռ չէ նշանակված, բայց չնորհիւ այն
համերաշխութեան, որ գոյութիւն ունի մեր
ձայնաւորների մեծամասնութեան մէջ, և մի եր-
կու. նախապատրաստական ժողովների, որոնք
տեղի ունեցան քաղաքագլխի թեկնածութեան
առկթով, մեր ձայնաւորները սկզբունքով որոշ
եղբակացութեան են եկել: Եւ այս տեսակէտից
կարելի է սպասել, որ ընտրութիւնը աղող կը
ունենայ, եթէ միայն քաղաքագլխի ուսմիկի
հարցը բարդութիւններ չառաջացնի:

Նախապատրաստական ժողովներում, վերջ-
նականապէս կանգ առնա՝ որպէս քաղաքա-
գլխի պաշտօնի համար արժանաւոր մարդու ի.
Մէլիք-Աղամալեանի վրա, չը նայած որ վերջի-
նը, ինչպէս նախորդ նամակով արդէն գրե-
կենք, հրաժարվել էր քաղաքագլխի թեկնածու-
թիւնից: Ներկորդ անգամ նրա մօտ ուղարկվեց
երկրորդ պատգամաւորութիւն՝ երեք հոգուց բաղ-
կացած, բայց այս անգամ կրկին հրաժարվեց
ի. Մէլիք-Աղամալեանը. սակայն նրան քաղաքա-
գլխի տեսնելու ցանկութիւնը այնքան վառ
է, որ ձայնաւորներից շատերը մասնաւոր կեր-
պով դիմեցին նրան պատճառն իմանալու: Պ.
Մէլիք-Աղամալեան յայտնել էր, որ ինքը փա-
տաբանութեամբ ստանում է մինչև 7,000 ռուբ-
լի և այդքանով էլ հաղւ կարողանում է կառա-
վարվել, բայց երեսներ աղքատ քաղաք լինելով
չի կարող մեծ ուսմիկ տալ քաղաքագլխին, իսկ
ինքը 3,000 ռ. ապրել չի կարող: Պատճառն
ուրեմն նիւթականն էր. և թէպէտ երկրորդ ան-
գամ գնացողներին յանձնարարված էր, եթէ
հարցը զայ ուսմիկ քանակութեան, աւելացնեն
համաձայնութեան պահ, բայց համաձայնութիւն
չէր կայացել: Ահա այսպիսի, զիւրաւորապէս, նիւ-
թական պատճառը՝ որպէս պարտք ծանրանում
էր ձայնաւորների խղճի վրա, որ այդ արգելքը
վերացնէին մէջտեղից, մասնաւոր որ բացի պ.
Մէլիք-Աղամալեանից մի այլ արժանաւորը ի նկա-
տի չունեն և նրանք իրանց պարտքը, ըստ ե-
րևոյթին, մասնաւոր կերպով կատարեցին: Հէնց
այսօր լսեցինք, որ վերջապէս պ. Մէլիք-Աղամա-
լեան մի քանի ձայնաւորների կրկնակի դի-
մումներին վրիճելով յանձն է առել քաղաքագլխի
թեկնածութիւնը միայն մի կողմից ձայնաւոր-
ների մէջ ուրախ տրամադրութիւն է առաջ
եկել: Իսկ միւս կողմից այժմ ջանքեր են գործ
դրվում, որ ուսմիկ վերաբերմամբ տարածա-
յութիւններ չը ծագեն: Եւ իսկապէս այդ խնդր
ը Նրեանի համար ամենափափուկ հարցն է:
Քաղաքը պարտքեր ունի, կարիքներ շատ, իսկ
եկամուտները ոչ այնքան մեծ, ասն այս դրու-
թիւնը թերեւ պատճառ լինի ձայնաւորներից
մի քանիսի համար արգելք առաջ բերելու պ. Մէ-
լիք-Աղամալեանի ընտրութեան դէմ, մասնաւոր
որ մի քանիսը ձայնաւորներից այլ հայրենի ու-
նեն: Թէ ընտրութիւնը ինչ հետեանք կունենայ,
այդ յայտնի կը լինի մի երկու օրից ցետոյ,
միայն մենք այս կտանք, որ արժանաւորին մի
2,000 ռ. աւել տալը կորած չէ: Ա—Իօ

ՆԱՄԱԿԱ ԱՅԼԱՔԱՎԱՔԻՑ

Հոկտեմբերի 1-ին
Վերջին տարիներս մեր գաւառական կենսը
բոլորովին դատարկվել, ամայացել է. նա ոչ

միայն ընտանիք, կանգ է առել, այլ ուղղակի շատ
բաներով յետ է գնացել: Ընդհանրությունը ա-
ռաջ էլ թմբած և անտարբեր էր դեպի իր մտա-
նոր-բարոյական շահերը, բայց կային ինտելի-
գենտ ու երիտասարդ անհատներ, որոնք որոշ
գիտակցություններ էին վերաբերվում դեպի հա-
սարակական շահերը և ձգտում էին ծառայելու
այդ շահերին, որքան նրանց ուժերը և հանգա-
մանքները ներուժ էին: Ամառվայ ամիսներին,
որ սովորաբար մեծ կենտրոններին հասարակա-
կան գործերի կանգ առնելու ժամանակն է, մեր
գաղափարական փոքրիկ կենտրոններին կհանձն
առանձին կենդանություն էր ստանում՝ հայրե-
նիք վերադարձած ուսանողներին չնորհով: Այդ
ժամանակ մի տեսակ խորտում էր ընկնում գա-
լառը, մէկը միւսի ետևից տեղի էին ունենում
ներկայացումներ, երեկոյթներ, դասխոսություն-
ներ, էքսկուրսիաներ և այլն: Այժմ գաղափա-
կան կենտրոն ֆիզիոնոմիան այդ երեկոյթներին
վերաբերմամբ շատ է փոխվել... դեպի վատը:
Այլ ևս առաջվայ բուն տեղական նախաձեռնու-
թյունը չը կայ, տեղական ուժերից ոմանք հիմա
արդեն հեղափոխական ժպիտով են յիշում իրանց
առաջվայ համեստ մասնակցությունը այդ գոր-
ծերում: Ոմանք էլ դարձել են մի-մի փոքրիկ
սֆինքս, փակվել են իրանց կեղծի մէջ և մը-
տածում են լոկ իրանց նիւթական ապահովու-
թեան մասին: Մեր արկիկները չ՝ լօտօն թո-
ղել, թուղթ են խաղում՝ ամառ ժամանակ պիկ-
նիկներ օտարներու պայմանով... Այդ մասը ֆո-
նի վրայ միթիվարականը այն է, որ մի խումբ
օրերոյնք գլուխներով երես են դարձրել թը-
թամորներին և սկսել են լուրջ ընթերցանու-
թեամբ պարպալել կարունձն սովորել կաշին
իսկ այժմեան ուսանողները, երթուղական պի-
տեղիաներով այդ փոքրիկ ու կոկիկ շրջան-
ները, որ իրանց երջանիկ հայրերից տարբեր-
վում են լոկ արտաքին փայլով, ամառ ժամա-
նակ միայն մտածում են թղթխաղի և պիկ-
նիկների մասին կամ աննպատակ չափափում են
փողոցները: Օրինակ՝ այս ամառ մեր փողոցնե-
րում թափառում էին այս կամ այն միջնակարգ
դպրոցն աւարտած՝ տասնեակ երիտասարդներ
— բոլորը դժգոհ ու թախծով դեմքերով, եռան-
դը մարած, և ոչ մի գործի ձեռք չը դարկեցին
նախկին հայրենիքը, որքան և նրանց հրախրեցին:
Այնպէս որ այս ամառ՝ չալլ պիկնիկներից ու
ինչոյցներից դատ՝ մեր քաղաքում հասարակա-
կան բնաւորութիւն կրող ոչ մի երեկոյթ տեղի
չունեցաւ:

Միայն սեպտեմբեր ամսին մեր մեռելային
դուռնիկն հասած կենտրոն մի փոքր կենդանա-
ցաւ: Նախ՝ Թիֆլիսի համալսարանի ուսանող
Պատարանի նախաձեռնութեամբ մի խումբ
երիտասարդներ ու օրերոյնք՝ ին թիկ տուած՝
մի ձայնական—գրական երեկոյթ կայացրին:
Հայրենիք վերադարձող գաղութականների օգտին:
Նրկու սեռի սիրողների երգեցիկ խումբը պ. Տ.
Տօմկանեանի ղեկավարութեամբ բաւական ներ-
դաշնակ էր երգում: Ինչպէս միշտ, աւելի անդ
էին ժողովրդական գեղեցիկ երգերը, որոնք ար-
տայայտում էին գիւղացու վիշտը կամ ուրա-
խութիւնը, նրա անարտաբան հիւստիքը... Կար-
դացիցները եւրօպական հեղինակներից, Արօսե-
նից, Ա. Մատուրեանից: Բացի դրանից՝ երեք
կենդանի պատկերներ դրին—«Գաղութականները
հայրենիքի ճանապարհին», «Առանցում» և
«Կաշխառուն պարտապանի տանը»: Երեքն էլ
չաւտ անդ ունեցան: Անարակներում նոյն բա-
րեգործական նպատակով բաղար էր սարքված:
Վերջը տեղի ունեցան ժողովրդական պարեր:
Երեկոյթը անդ էր և նիւթական տեսակետից
զուտ արդիւնք յանձնվեց գաղափարներին, որ
իր նպատակն իրականացնէ: Երկրորդ՝ Բարե-
գործական ընկերութեան պատեղի ճիւղի օգտին
տեղի ունեցաւ մի բարեգործական բաղար:
Երեքը նուէրներ էին տնկել և խանութները:
Բաղարը բաւական անդ անցաւ. առնողները
մեծ մասամբ հասարակ արհեստաւոր դասակար-
գից էին, զուտ արդիւնք մնաց մօտ 160 ր.—
Վերջը տեղական թատրոնասէրները մի ներկա-
յացում տուին Բարեգործական ընկերութեան
ժամանաւոր դպրոց—արհեստանոցի օգտին: Ներ-
կայացրին Մօլիէրի «Բռնի ամուսնութիւնը», Ա-
րարտանի «Առում ճգնաւորը» և Տէր-Գրիգոր
Բանի «Պառաւանքներ իրան» վոլյովիլը: Ներ-
կայացումն ընդհանրապէս անդ անցաւ: Նրեք
պիկնիկներում, ժամանակ, գեղեցիկ կատարեց իր
գերը պ. Յ. Կարապետեան, իսկ «Առում ճը-
նաւորում» նաև պ. Ա. Տէր-Գրիգորեան: Ներ-
կայացման վերջը երկու կենդանի պատկերներ
դրին—«Հայ աղջիկը աղբիւրի մօտ» և «Դա-
թականի սառած երեխան», որոնք նոյնպէս ա-
նդ էին: Ներկայացումից զուտ արդիւնք մնաց
մօտ 105 րուլի: Զէ կարելի հրապարակական
չնորհակալութիւն չը յայտնել մեր երիտասարդ-

ներին. ցանկալի է, որ նրանք եռանդով գլուխ
բերեն և հետեւալ ներկայացումը, որ մտադիր
են տալու այս աշխարհ: Զ. Տ.-Գ.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՈՒՅՑ

Հոկտեմբերի 1-ին

Կովկասի քաղաքներից գուցէ ոչ մի քաղաք
այնքան զուրկ չէ ուսումից, որքան Ալեքսանդրո-
պօլը: Հաղաբար տղաներ մնացել են անուսում,
մնացել են անիլիթ, հարկաւորները քաշ են
դալիս փողոցներում՝ ապակալելով փողոցային
անվայել կեանքից: Կովկասի քաղաքներից չա-
տեր ունեն իրանց ընտանիքները, գեղնա-
գիւն, ինչպէս, օրինակ՝ Շուշին, Նրեանը, Վյա-
դիկավկասը և այլն և այլն, սակայն Ալեքսանդր-
օպօլը իր 35 հազար բնակչով զուրկ է միջնա-
կարգ դպրոցից, զուրկ է նոյն իսկ պրօգրմա-
դիայից. ինչպէս մի ծնող, երբ ցանկութիւն ունի
տղին ուսման տալը, բայց տեղ չը կայ, մնում է որ
ուղարկի Նրեան, Թիֆլիս, բայց հեշտ է ու-
ղարկելը Տարեւ 400 ր. փող է հարկաւոր մի
տղայի, իսկ գաղափարական քաղաքում, որտեղ մեծա-
մասնութիւնը հազիւ հազ ապրում է, ինչ-
պէս հոգան այդ սարսափելի ծախսերը: Նիւ-
թական գրկանքը մի կողմից, հեռաւորութիւնը և
անյարձաբարութիւնը միւս կողմից, արեւելք են
մեր քաղաքացիները շատերին իրանց տղա-
ներին կրթութիւն տալ, և հեշտ էլ չէ ի հարկէ
մի ծնողի տարէնը ամեն մի տղի վրա 300—400 ր.
ծախս անել և այն էլ օտարութեան մէջ
պահել: Թող մեր քաղաքային դուստն աշխատի
միջոցներ գտնել այդ ամենակարեւոր հիմնարկու-
թեանը բանալու: Քաղաքը ունի իր որոշած տեղը
գիւմրակային կամ ընտանիքային դպրոցի համար:
Եթէ ջանք և աշխատութիւն լինի, գործը շուտ
զուրկ կը դաշ: Երեկոյցի

ՆԱՄԱԿ ԹԵԼԱՒԻՑ

Սեպտեմբերի 28-ի

Բարեգործական ընկերութեան պատեղի ճիւղը
ձեռք բերելով մի պարահանդէսի իրաւունք և
չը կասկածելով որ առանց որ և իցէ արգելի
այդ պարահանդէսը ըստ սովորութեան կարող
նախկին հայրենիքի շինութեան մէջ սեպ-
տեմբերի 25-ին պաշտօնապէս դիմեց պատեղի
գործակալին, որից ստացաւ հետեւեալ պատաս-
խանք: «Եթե ամենակի են անփոփախ գրա-
դարան և մանր իրերդնս փակեալ դպրոցաց,
զորս յանձնեալ է ցուցակաւ ինտելիտօր՝ տալով
ինձ և երեքփոխանի աւագ բնիկեղեցւոյ ստորա-
գրութեամբ իւր և մեր, ի իմում դաշինքի են դե-
տեղեալ զՅՊ հատ նստարանս աշակերտաց և
մնան պարապ մի դաշինք և մի սենեակ, և եթէ
բաւական համարեալիք, կարելի պատրաստել տալ
և ունել զպարահանդէս, հատուցանելով զվարձ
5 ր. դրամս»: Ինչպէս տեսնում էք երկու սե-
նեակի համար բարեգործական ընկերութիւնը
պէտք է վճարէ 5 ր. և որ ծիծաղելին է, իրա-
ւունք չունէինք նստարաններին ձեռք տալ: հե-
տագիւտ հասարակութիւնը պէտք է պարէ նըս-
տարանների վրա: Չը նայեալով որ ընկերութեան
վարչութիւնը բոլոր կաշ-կարասիքի համար գրա-
ւոր երաշխաւորութիւն էր տուել, այնուամենայ-
նիւ մեր խնդիրը մերկայաց: Մենք կրկնեցինք
մեր խնդիրը, յարակցելով, որ նա, որպէս հոգեւոր
իշխանութեան ներկայացուցիչ՝ պէտք է աշակցէ
այսպիսի սուրբ գործում և ստացաւք հետեւեալ
պատասխանը. «Իսկ ինչ վերաբերի թէ՛ ես ներ-
կայացուցիչ ևս հոգեւոր իշխանութեան, այդ ինձ
է միայն յայտնի և կարող եմ պատասխանել
չիւրում ժամանակի թէ՛ ինչ է պատճառ որ ոչ
կամիմ աշակցել այսպիսի սուրբ գործին. խնդ-
րեմ բաւական համարել նախկին գրութիւն և
աւելորդ գրութեամբ չնեղել զմեզ: Ինչ քնքու-
թիւն: Գործակալի առաջին պատասխանը հա-
կաւում է երկրորդին և եթէ կամենար կարող
էր տալ, բայց մէջտեղ մի շօր ոչ կամիմ» է ե-
ղել, որի մասին զկարող է պատասխանել և
որի պատասխանին մենք անհամբերութեամբ
սպասում ենք: Բացի դրանից մենք երկրորդ
պատասխանից խանում ենք, որ նա հոգեւոր իշ-
խանութեան ներկայացուցիչ լինելով, այդ գաղտ-
նիքը միայն իրան է եղել յայտնի, այսինքն
դրանով ուղղում է ասել. «Եթէ ես մինչև այսօր
առանց որ և իցէ կ'օտ օր էլ մնում եմ պաշ-
տօնիս մէջ՝ այդ գաղտնիքը միայն ինձ է յայտնի»: Լաւ:
Գործակալը մեզ պատասխանում է, որ նա
իր ժամանակին կարող է պատասխանել, թէ ինչ
է պատճառը, որ ոչ կամի աշակցել. բայց ում
պէտք է պատասխանել կամ ինչ—մեզ յայտնի չէ:
Այդպիսի սպանաւոր շատ ենք լսել նրանից:
Չը սպասելով նրա պատասխանին, մենք կասնք
այդ գաղտնիքի պատճառը: Հայր գործակալը
անցեալ 1897 թվին վարչութեան անդամ լինե-

լով և ղեկավարելով ընտրութիւններին փառա-
ւորապէս տաղալովելով ոչ թէ գործադիր ան-
դամ չըլլեց, այլ նոյն իսկ աշխատում է բարե-
գործական ընկերութեանը վնասել: Ինչ պար-
ծանք: Թէ և ընկերութիւնն արդէն ծախսել էր
մինչև 20 ր., բայց գործակալի կապիւրդի պատ-
ճառով ստիպված էր բոլորովին հրաժարվել այդ
պարահանդէսից, որովհետև հայոց հասարակու-
թիւնը կուրք չի յաճախում և ուրիշ յարմար չի-
նութիւն էլ չը կայ: Վարչութիւնն իր խնդիրը
կրկնեց երրորդ անգամ, բայց գործակալը մնաց
յաճառ իր կամակորութեան մէջ: Ետո ցուալի է:
Նախագահ վարչութեան՝ Արէլ բա-
նանայ Սուրբասեանը: Անդամ ենք՝
Փրօքով Բէգիյանեանը, Գրիգոր Գե-
որգեանը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վառնա, սեպտեմբերի 18/30-ին

Պատիւ ունիմ յայտարարելու, որ Վառնայի
մէջ հիմնած եմ դիշերօթիկ և ցերեկեայ
վարժարան մը՝ հինգ տարեկան չըլլանով և երկու
բաժանութիւն, որոնց մէկուն մէջ աշակերտաց պի-
տի պատրաստի բուկարական գիմնադիօնի մին-
չև 5-րդ դասարանի, իսկ միւսին մէջ՝ առևտրա-
կան առարկայի համար: Այս առարկայութեամբ
անհրաժեշտ նկատեցի ծրագրել մէջ մտցնել, բա-
ցի սովորական ուսումնական և լեզուներէն, նաև
անգլիերէն ու գերմաներէն, գործնական տոմա-
րակալութիւն, առևտրական-հաշուական գիտե-
լիք, վաճառականական թղթակցութիւն և օ-
րէնսդիտութիւն:

Այս հաստատութիւնը՝ աշակերտաց տարեթի-
շակներէն զատ, հասցնելի ուրիշ աղբիւր չունե-
նալով, ինձ կարելի եղած չէ ընդունել որք, այլ
խելեղի պատանիներ, որոնք ներկայացած են՝
հետեւեալ համար վարժարանի ընթացքին: Ի-
բաց այս վիճակին մէջ մտածեցի կուրսը ընել
ամեն աղբիւ և կարող հայու, որ յանձն առնէ,
եթէ կարելի է, մի որքի պաշտպանութիւնը, ո-
րը համար պատրաստ եմ հրաժարվել չահու ա-
մեն անկարկութեան և զոհանալ՝ ստանալով մի-
այն այդ որքի տարեկան անհրաժեշտ ծախսը՝
սնունդի, բնակութեան, գրական պիտոյքի, լը-
ւացքի, հագուստի և այլն, ինչ որ կարելի է
ձեռք բերել տարեկան 160 րուլի թղթակաւ:
Ստար ներշնչումներով կառավարված որքանոց-
վարժարաններու ջով զուտ հակական այս հաս-
տատութիւնը այնքան մեծ առաւելութիւններ
կընծայէ, որ ապահով եմ թէ առևտրայ ազ-
նիւ հասարակութիւնը սիրով պիտի լսէ իմ ձայ-
նիս և պիտի քաջալերէ զիս իմ առաջդրու-
թեանս մէջ՝ յանձն առնելով առ այժմ գոնէ մի
քանի որքերու պաշտպանութիւնը:

Իբր հաստատութիւնը հարկ եղած քաջալե-
րութիւնը գտնէ, մօտ առնելն պիտի հրաւիրեմ
իմ մօտ առևտրայ մանկավարժ ուսուցիչներ՝
որոնց աշակերտութիւնը գրաւական մը պիտի լի-
նէ հապիւ բարոյական այս ձեռնարկին:

Հիմնադիր-անօրէն գլխիւթիկ և ցերեկեայ
«Հայկական կրթարան» Կր. Միքայէլեան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Վիրակի, սեպտեմբերի 4-ին, Թիֆլիսի Մուշ-
տայիւ պղում բացվեց այգեգործական
ցուցահանդէս, որի հետ միասին բացվեց և
այգեգործների ժողովը: Ցուցահանդէսը դեռ
լիակատար չէ, ուստի նրա մասին կը հաղոր-
դենք, երբ ցուցահանդէս ուղարկված իրերը կը
ստացվին: Ժողովը բացեց այգեգործական բաժ-
նի նախագահ Սուլտան Կրեմ-Վրէյ, ներկայու-
թեամբ Թիֆլիսի նախնադպետի և քաղաքա-
լիկի, երկրագործութեան միւնիստրի լրագոր
Մեդվեդով, ուսումնական չըլլան հոգաբարձու
Նեմովիլու և Թիֆլիսի Բաժնի բարոյաւոր
Գոգօլ-Նեմովիլի կարգաց գեկուցում ցուցահան-
դէսի նախադասութեան գործերի մասին: Գա-
ղաքալիսը ողջունեց քաղաքի կողմից ցուցա-
հանդէսի բացումը: Ապա Վ. Լիսնովիկի կար-
դաց մի ընդարձակ ղեկուցում ձորախոռոչները
ամրացնելու և ծառերով պատելու փորձերի
մասին:

Մեկ հաղորդում են, որ չուտով Թիֆլիս կը
դաշ նշանաւոր ծերունի երաժիշտ պիանիստ
Անտօն Կօնտսկի և կը տա Թիֆլիսում
կոնցերտ Կօնտսկի այժմ 82 տարեկան է, բայց
պահպանել է իր երաժշտական թաքնութիւնը և
հիացնում է լուղներին, ինչպէս և առաջ: Նա
աշակերտել է հաշակաւոր Բեթհօվենին, գործել
է Լիստի, Գօպենի և Մէյերբերի հետ, ժամա-
նակակից է Միլեղեյուսին, Բօսին, Տալերնի,
Գուսնի և շատ ուրիշ յայտնի երաժշտական
գործողներին:

Հոկտեմբերի 4-ին, Թիֆլիսի ծայրին, Խաչի
մօտ, տեղի ունեցաւ մի անսովոր սպանութիւն:
Ներկայեան մօտ 10 ժամին, իր մօտիկ կալուած-
քից քաղաք էր վերադառնում կալուածատէր Գա-
լիթ Գաբաշի, մի արհեստաւոր ուղեկցութեամբ:
Երեկոյցը յետի լուրջ կառապանի զխաբարչա-

գոյնը, որին Գաբաշի նկատեց, թէ ճանապարհը
լայն է և կառքը կարող են միւս կողմով քշել:
Այդ պատասխանը յանդուգն թուաց կառքի մէջ
նստած պարոններին, որոնք երեկ քէ ֆից էին
վերադառնում. նրանք անմիջապէս իման կառ-
քից, կուռ գցեցին, և սրբով մահացու վերքեր
հասցնելով Գաբաշին, նորից նստեցին կառքը
և շարունակեցին ճանապարհը: Գաբաշի ընկե-
րը փախչելով միայն ապստղեց: Խեղճ վիրաւորը
մի քանի րօպէկից յետոյ հոգին փչեց: Նոյն գի-
շերը ոստիկանութիւնը ձերբակալեց զլսաւոր
յանցաւորին՝ իշխան Շիլիսի Թուսիկին, իսկ
միւս օրը նրա երեք ընկերներին: Այդ նոյն
Թուսիկին է, որ երկու տարի առաջ Գօրու
կողմերում մի հայ աղջիկ փախցրեց: Մեղադրե-
վածները արդէն բանտարկված են: Ահա մի
նոր փաստ մեր վայրենի բարքերի...

ԷԶՄԻՍԹԵՆԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի
20-ին ձեռնարկվեցին կրկին երկու եպիսկոպոս-
ներ, որ եկել էին Թիբերիայից: Այս օրերս նորա-
պսակ եպիսկոպոսները զուրս եկան այստեղից և
ուղևորվեցին դէպի Կ. Պօլիս: Միաբաններից և
ուսուցիչներից շատերը ճանապարհ գցեցին նը-
րանց մինչև Փարաքար գիւղը՝ ոչ թէ անկեղծ
յարգանքից դրդված, այլ երեկ այն յոյսով, որ
այդ եղանակով կարող կը լինեն այստեղ փակ
պահած լեզուները Պօլսում բանալ յօղուտ մի
որոշ դասակարգիչ»:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Յայտնի է, որ Վե-
հափաւը Տիրայր վարդապետին նշանակելով տե-
սուչ, որոշել է տալ նրան 1200 րուլի տարե-
կան ուժիկ: Այժմ, ինչպէս լսում ենք, վարդա-
պետը պահանջում է հոգաբարձութիւնը (!) ա-
ռանձին վարձ՝ շարժական վեց դաս առանդե-
լու համար... Կարծում ենք, որ Վեհափաւը
նշանակելով տեսչին 1200 րուլի ուժիկ, ան-
կասկած, ի նկատի է ունեցել ոչ միայն լոկ
տեսչական պաշտօնավարութիւնը, այլ և՛ տեսչի
աւանդելը դասերը»:

ԴԵՐԵՆԵՏԻՑ մեզ գրում են. «Սրտատրոփ սպա-
սում ենք նոր կառուցված երկաթուղու առա-
ջի գնացքին: Քաղաքային ինքնավարութիւնն
արդէն ստորագրութիւն է բաց արել գնացքը
հանդիսաւոր կերպով ընդունելու համար: Երկա-
թուղու գիծը՝ Պետրօվսկուց սկսած մինչև Դերե-
բնտ համարեա պատրաստ է. հողային աշխա-
տութիւնները և կամուրջները մինչև Դերեբնտի
կայարանը բոլորովին վերջացրած են: Միայն կա-
յարանի շինութիւնը մինչև հիմա հազիւ երեք
արշին բարձրացած լինի հողից. շինութիւնը
բաւական մեծ է և գեղեցիկ: Բնէները գցված են
մինչև Խան-Մամէտ-Ապա կայարանը, որը Դերե-
բնտից մօտ 20 վերտ հեռաւորութեան վրա է
գտնվում: Ուստաւորներից եկողները գրեթէ բո-
լորն էլ երկաթուղով են գալիս, որը ձրի բե-
րում է մինչև այդ կայարանը: Առաջի գնացքին
սպասում ենք հոկտեմբերի սկզբներին: Ան-
ցեալ օրը գնացքներից մէկը խորտակվել էր.
մարդատար վագօնը ընկել է երկաթուղու պա-
հակառնից վրա, և միայն չնորհիւ այդ հանդա-
մանը՝ մարդկանց են դժբաղդութիւն չէր պա-
տահել»:

ԱԼԼԱՔԱՆԱՔԻՑ մեզ գրում են հոկտեմբերի
2-ից. «Այս գլխից մեր գաւառապետ՝ իշխան
Գրիգորի Սէլեստրօօվի Քարան-Մօրեալով
յանկարծման եղաւ Բարալթ գիւղում: Հան-
դուցեալը նոր էր անցկացրել 50 տարին: Նա
սկզբից երկար ժամանակ Ախալցխայի և Ախալ-
քալաքի գաւառների հայտարար միջնորդ էր,
յետոյ նշանակվել է Թիֆլիսի գաւառապետ,
որտեղից մօտ հինգ տարի առաջ տեղափոխվեց
մեր գաւառը: Հաւանական է, որ մարմինը տա-
նեն Գօրու գաւառի իր հայրենի Ախալքալաք
գիւղը»:

ՎԱՂԱՐՇԱՍՏԻՑ մեզ գրում են. «Այգեկոյթին
արդէն սկսվել է և գուցէ երկու շաբաթ չան-
ցած՝ բոլոր այգիների խաղողները քաղված լի-
նեն և վերջացրած: Խաղողի բերքը մեր կողմե-
րում թէև պակաս չէ, բայց խաղողի գինը բա-
ւական բարձր է. մէկ խաղար (33 սոլ) խա-
ղողը ծախվել է 20—25 րուլի, ունչի աւելի
ևս բարձրանալ, եթէ եղանակը անձրևային չը
լինի և այգետէրերը մի քանի օր էլ կարողանան
համբերել և ոչ քաղել խաղողը»:

ՇՈՒՇՈՒՑ մեզ հաղորդում են. «Մեր քաղաքա-
յին վարչութեան ուղարկութիւնն ենք հրաւի-
րում թ օ փ ի ս ա ն ա յ ու մ նոյն վարչութեան կող-
մից նշանակած կարգապահ ոստիկանների վրա,
որոնք՝ իբրև թէ կարգ պահպանելու համար,
անխնայ կերպով ծծում են թօփախալում

կանգնած եկուր գիւղացիներին և նրանց բնականորէն ձիւններին և էշերին, չը մոռանալով մի և նոյն ժամանակ թափել այդ թշուառների զլխին այն տեսակ լպիւր հայտնաբերել, որ լսող մարդկանցից ամեն մէկն շտապում է փակել իր ականջները... Ճշմարիտ է, քաղաքային վարչութիւնը մտածում է քաղաքացիներ յարմարութիւններ և եկուր գիւղացիներին համար նոյնպէս յարմարութիւններ ստեղծել:

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԽԱՂԵՐ ԵՒ ՆՈՐ ԱՌԻԹՆԵՐ

4. Պօլսից «Новое Время» լրագրի թղթակիցը գրում է հետևեալը. «Փամանակակից թիւրքերայի քաղաքական գրութիւնը վրդովում է հասարակաց կարծիքը: Անբաւականների թիւը աւելանում է օրէցօր: Կրեմական հարցի վերջաբանը ապաւորութիւն թողեց ամեն տեղ՝ թէ դաւառներում և թէ մայրաքաղաքում: Զօրքը տրտնջում է: Ասում են—սուլթանը Կրեմէն տունը գետնաբերել: Ինչու համար էինք մենք կռոււմ և կոտորում: Փետրուկում: Յոյներին ստացած փողերը յայտնի չէ, թէ ուր գնացին: Վերաբերվածները և սպանվածների ընտանիքները ապրում են մութացկանութեամբ: Վերջին ժամանակ շատ ձերբակալութիւններ կատարվեցան օֆիցէրներին մէջ, մասնաւոր Պանկալիի զինուորական զորքից: Նրանցից շատերը պատկաշում է երկտասարդ թիւրքերի կուսակցութեան (այստեղի և ոչ արտասահմանի): Իրա դրոշմին է Միդհատ-փաշա, թիւրքաց կառավարութեան պատուիրակը միջազգային և առողջապահական յանձնաժողովում: Դա եւրօպական կրթութիւն ստացած մի բժիշկ է, հարուստ և անկախ, որ վայելում է սուլթանի բարեհաճութիւնը: Այդ կուսակցութեան ձգտումների մէջ ամենահետաքրքրականն այն է, որ նա կողմնակից է Ռուսաստանի հետ մերձեցմանը մոլորել և թշնամի է գերմանացիներին: Թիւրքերն այժմ լցված է գերմանացիներով և դրա մէջ տեսնում են թիւրքերայի կորուստը: Մանաւոր շատ գրգռում են այն հանդէսները, որոնք պատրաստվում են ի պատիւ Վիլհելմ կայսրի: Արդարացի կերպով մասնաւոր են անում, թէ որքան անօգուտ են այդ ծախսերը, այլ և այն՝ որ եթէ կայսր լինէր թիւրքերայի ճշմարիտ բարեկամը, նա կը հրաժարվէր այդ երկրի իր սնապարծութեան համար թանկելուց: Երկրիւ են կրում որ սուլթանը իր թէ իրեն և թէ հողեր կը պարգևէ կայսրին: «Չարագանց խտուրթեան միջոցներ են ձեռք առնված այստեղի հայերի դէմ: Ամեն օր նրանց կառնաւորում են տանհանկներով: Ի միջի այլոց այն գնացքով, որ բողբոջներ էր բերում այստեղի բողբոջական եկեղեցու օժան ներկայ լինելու, փորձեցին 4. Պօլսի մոտեւ և մի քանի հայեր: Բայց թիւրքաց ստորկանութիւնը, իր ժամանակին լուրն ստանալով, ձերբակալեց նրանց՝ սահմանի վրա: Հէնց այստեղից առաջադրան այդ գնացքի վերաբերմամբ եղած դժուարութիւնները, որոնք առկա տուեցին բողբոջական գիւղամտակական ազնիւ Մարկոլին բողբոջ ներկայացնել Բ. Իրան»:

ԴԻԷՅՈՒՍԻ ԳՈՐԾԻ ԸՆՈՒՐՁ

Ինչպէս յայտնի է, Դիւլֆուսի գործի վերաբնութեան հակառակորդները շարունակ պնդում էին, թէ վերաբնութիւնը կարող է պատերազմ առաջ բերել Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ: Անհարկելով հասկացնում էին, որ Վիլհելմ կայսրի ձեռքով դրած նամակներ կան: Գերմանիայի կողմից պաշտօնապէս և դրական կերպով հերքում էին շարունակ այդ նամակների գոյութիւնը: Հիմա այդ նամակների հարցը նորից երևան է եկել, այժմ ֆրանսիական լրագրները յայտնում են, որ ընդհանուր շտաբում գտնվում են Վիլհելմ կայսրի ձեռագիր նամակները: Սակայն Կեմանոս յայտնում է, որ ոչ թէ իսկական նամակներ կան, այլ նրանց լուսանկարական ընդօրինակութիւնները, որ գնել է արտաքին գործերի նախկին մինիստր հաստատ 27,000 ֆրանկով: Այդ իրողութիւնը հաստատում են երկու ձեռնահաս գերմանական լրագրներ—«Kölnische Zeitung» և «Neue Freie Presse», թէ նրանց մեղակարգները բողբոջին ուրիշ կերպարանք են կրում: Առաջին լրագիրն ասում է. «Մենք կարող ենք հաւատաւոր Կեմանոսից հաստատած տեղեկութիւնները և լրագրի նրանց հաստատի աղբիւրներից քաղած մանրամասնութիւններով: Լուսանկարական նամակների վրա, վերնագրի տեղ, այն խօսքերն են գրված. «Նորին մեծութեան գերմանական կայսրի և պրուսաց թաւաւոր կաթնիները, երկուսն էլ ստու-

բաղրված են «Wilhelm I. R.» (Կայսր—թաւաւոր): Այդ նամակների մէջ Վիլհելմ կայսրը յիշում է այն ծառայութիւնները, որ Դիւլֆուս մատուցել է Գերմանիային և յայտնում է, թէ Դիւլֆուս չը պէտք է հեռանայ ֆրանսիական զօրքի ծառայութիւնից և թէ պատերազմի դէպքում Գերմանիայի և Ֆրանսիայի մէջ, նա պէտք է ընդունվի գերմանական զինուորական ծառայութեան մէջ: Այդ դժուարութիւնները ուրիշ բան չեն, եթէ ոչ խիստ ճարպիկ կեղծում: Ընդհանուր շտաբը յանձնեց վճարելով դատարանին միայն 1894 թվի դատի ակտերը, իսկ նամակների լուսանկարական պատճենները թողեց իր մօտ: Ներկայումս վճարելով դատարանը պատճեններ է այդ պատճենները մինիստրութիւնից, իսկ վերջինս, իր կողմից, պահանջում է զինուորական իշխանութիւններից: Սակայն զինուորական իշխանութիւնները հրաժարվում են տալ այն հիման վրա, որ այդ լուսանկարները չեն վերաբերում 1894 թ. դժուարութեան և եթէ նրանք հրատարակվին, կարող է պատերազմ ծագել Գերմանիայի հետ: Նոյնը, հաստատում է և «Neue Freie Presse» լրագիրը, սակայն աւելացնում է մի հետաքրքիր տեղեկութիւն, որ վերջինից լուսանկարական դժուարութեան թելուկ կայ մի լուսանկար, որի վրա նկարված են միատեղ գնդապետ Եվրոպայի և գնդապետ Պիկար: Այդ լուսանկարն էլ կեղծ է:

Վճարելով դատարանը կարող է երեք տեսակ վճիռ կայացնել. նա կարող է որոշումն առաջադրել վերաքննութեան, կարող է գործին ոչ մի ընթացք չը տալ և կարող է Դիւլֆուսի մասին կայացած դատավճիռը համարել անհրաժեշտ, հետևաբար և Դիւլֆուսին ճանաչել ազատ պատմից: Տեսնենք այդ որոշումներից որը կը կայանայ:

ԿՐԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Կրեմէն, վերապէս, ազատվեց թիւրքաց լուծից. սուլթանը Արդու-Համիդն ստիպվեց խոնարհվել Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Իտալիայի վերջնական պահանջի առաջ և հրաժարն տուեց, որ թիւրքաց զօրքերը, ինչպէս և թիւրքաց իշխանութիւնները հեռանան Կրեմէնից: Այդ առաջին օրինակն է, որ եւրօպական մեծ պետութիւնները այնպիսի խիստ լեզու բանեցրին և այնպէս համբարալ զօրեցին թիւրքերայի դէմ, որ սուլթանը, չը նայելով նոյն իսկ իր բարեկամ Վիլհելմ կայսրի յորդորներին, ստիպվեց զիջել մեծ պետութիւնների կամքին: Ներկայացրած վերջնագրի բովանդակութեան մասին ա՜հա ինչ են հաղորդում եւրօպական լրագրները.

«Յիշատակալիւր կազմված է ուլտիմատումի ձևով և պարունակում է հետևեալ հինգ կէտերը. 1) մեծ պետութիւնները պահանջում են սուլթանից, որ յիշատակալի ստանալուց երկու շաբաթվ յետոյ Կրեմէնից յետ կանչվեն օսմանեան զօրքերը և զօրքերի հեռանալը վերջնայ մի ամսվայ մէջ, հաշվելով նոյեմբերի 5-ից. 2) Բ. Կուռը պէտք է հաստատ պատասխան տալ յիշատակալի ստանալուց մի շաբաթ յետոյ. 3) Բ. Կրան մերժման կամ խուսափողական պատասխանի դէպքում, մեծ պետութիւնները միջոցներ ձեռք կառնեն, որ իրանց պահանջը կատարվի. 4) կղզու մուսուլմանների ապստամբութիւնը երաշխաւորում են մեծ պետութիւնները. 5) սուլթանի վեհապետական իրաւունքները մեծ պետութիւնները կը ճանաչեն, եթէ օսմանեան զօրքը կամաւոր կերպով հեռանայ կղզուց: Կղզու քրիստոնեայ ազգաբնակչութիւնը ցընծում է. ժողովրդականները, ըստ երեւոյթի, ոչինչ չը դիտեն վերջնագրի մասին: Կրեմէնի ազգային ժողովի նախագահ Սֆախանական ուղղել է ժողովրդին մի չըջաբերական, յայտնելով, որ հնորհիւ չըրս մեծ պետութիւնների ճնշման, Կրեմէն, վերջապէս, ազատվեց իր չղթանիցից:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, սեպտեմբերի 20-ին

Սով է, սով... Մարափելի է ժողովրդի վիճակը. հաց չատ քիչ կայ, եղածն էլ խմոր և սև, մինչև չուտուի աստիճան: Տարվայ այս ժամանակին ցորեն ձեռք չէ ընկնում, բոլորը աղաներն են դիզում...

Միակ ուրախելի լուրը, որ կարող ենք հաղորդել, դա «Աստանական» ընկերութեան գեղեցիկ գործն է: Այս ընկերութիւնը, կազմված և հաստատված լինելով այստեղ մարտի 1-ից բըժիշկ Կ. Փաշայեանի նախաձեռնութեամբ, ինչպէս գիտեն ընթերցողները՝ նպատակ է դրել նպատակ հայ հասարակութեան ժողովրդագրամանը: 15 օրը մի անգամ տեղի ունեցող հանրա-

մատչելի գիտական, գրական, առողջապահական, պատմական, մանկավարժական և այլն դասախօսութիւններով: Անցեալ շաբաթ առաջնորդաբանում տեղի ունեցաւ այդ ընկերութեան ընդհանուր ժողովը, որի գումարման նպատակն էր վեցամսեայ վարչական մարմնի անդամներ ընտրել և այլ հարցեր: Իսկ այս ուրբաթ գիշեր, ժամը 8-ից առիթ ունեցանք լսելու Լիւվալի թատերական սրահում դրօշմոր Փաշայեանի մի առողջապահական դասախօսութիւնը՝ «Գիշերգործութեան և զինու. օգտի ու վնասի մասին»: Գործօրը կարճ կերպով բացատրեց այն բոլոր չափերը, որ առաջանում է ալքօհոլ գործածութիւնից և դրա տուած օգուտը, որից յետոյ ըստ սովորութեան տեղի ունեցաւ հանդիսականների մէջ վիճաբանութիւն խօսված նիւթի մասին: Այս տեսակ դասախօսութիւններն առհասարակ իրանց լաւ հետաքննիչն են ունենում և մենք սպասում ենք, որ այստեղ էլ նոյնը կը լինի, եթէ ոչ այսօր, գոնէ վաղը:

Մարաղայից հեռոջեմէ լուրեր են ստացվում, որ հիւանդութիւնը (չերմախտ սաֆրայի կամ եւթալիք տիֆ) սարսափելի կոտորած է անում, շատերն արդէն քաղաքից հեռացել և գնացել են մօտակայ ամառանոցները՝ հիւանդութիւնից ազատվելու համար: Մի շաբաթ առաջ մեռել է նաև այնտեղի միակ քահանայն և ժողովրդը վնասել է առանց հողեր միլիթարութեան: Ասում են, որ այստեղից չուտով քահանայ պիտի գնայ:

Առևտուր էլ չը կայ, դժբաղդաբան, և այս տարի վաճառականներին հազարի վնաս է սպառնում, եթէ խանութները գործ չը տեսնեն, որովհետև ապրանքները սարսափելի կերպով թանկ են: Սաղան, որ առաջ առնում էին 2—3 դրանով, այժմ պիտի առնեն 6—7 դրանով, որովհետև ամեն տարվայ մի քառորդը հազար թէ լինի այս տարի: Կատարեալ անկուրթիւն... Ա.

ՆԱՄԱԿ ԲՈՂԻՍԻՍԻՑԻՑ

Սիւլիստրիա, սեպտեմբերի 28-ին
«Մշակի» մէջ բաւական երկար և մանրամասն տեղեկութիւններ տրուեցան հրէից «Սիւսնականութեան» և անոր Բաղէլ գումարած կոնգրէսին նկատմամբ. այժմ, իբրև յաւելում սոյն տեղեկութիւններ, հարկ էր համարել թարգմանաբար ի մէջ բերել, ֆրանսական «Revue d'Orient» հանդեսին, նաև հետեւեալ տեղեկութիւնները:
Նշանակեց, հետաքրքրութեան համար, «հրէական բանկի» մը վերջնական հաստատութիւնը: Դիւնքը, որ այս սիւսնական կոնգրէսին գործնական արդիւնքներէն մին է: Անոր կազմութիւնը բուէարկուեցաւ նորքս Բաղէլի մէջ գումարաւ կոնգրէսին անդամներէն: Բանկը պիտի գտնվի Լօդօնի մէջ և պիտի աշխատէ մասնաձեւերից հաստատել ամեն երկրներու մէջ: Դրամագրութիւն է երկու միլիոն տոկոսով ոսկի, և բաժնուած է նոյնքան միլիոն անկիւններու: Բանկի ընկերային նպատակը և դերը կրնայ սահմանվիլ այսպէս.

- 1) Ձեռնարկել կամ հաստատել ինդուստրիական հաստատութիւններ և առանձնապահական ընկերութիւններ արևելքի և մասնաւորապէս, Սիւլիոյ և Պաղեստինի մէջ՝ հրէական բանտորներու ոյժերը բանեցնելու համար:
- 2) Հաստատել հրէայ մշակներու դպրական-նորմալ Սիւլիոյ և Պաղեստինի մէջ:
- 3) Կազմակերպել նոյն երկրներու մէջ վաճառականական ներածութիւն և արտածութիւնը:

4) Ստանալ կոնցէսիսներ՝ այս գաւառներու մէջ երկաթուղիներ, ծովերուն մէջ՝ նաւահանգիստներ, լեռներուն մէջ՝ ձառքներ շինելու համար:

Բանկը կարգել է իրեն որ և է շահադիտութիւն անել: Բայց ինչ որ, մասնաւորապէս, հետաքրքրական է սոյն հաստատութեան մէջ, այն է իրենից ծայր գործնական նպատակի մը հետեւելով հանդերձ, կոնգրէսի անդամներէն առաջ եկած այս բանկը համարված է իբրև բացարձակապէս ազգային գործ մը, պիտի կրնայինք նոյն իսկ ընտանեկան ասել, վնաս զի հրէայ ազգը միայն և նոյն իսկ մեծ ընտանիքն է, որ իր կապիւրը ևս բան զև ամփոփելու նպատակն ունի սիւսնական կոնգրէսը:

Բանկն այն նախապայմանով (пожалу) կը նշանակի, որուն շուրջ պիտի բոլորուին սոյն ընտանիքի բոլոր անդամները: Ինչ որ անոր այս ազգային յատկութիւնը կը տալ, այդ մէջ և, որ բանկն պիտի լինի ազգային ֆոնդի աւանդապահը, որ իրաւորաբար ոյժ պիտի ստանայ սիւսնական ասորքի արդիւնքէն:

Եւ դարձեալ, ստուգիւ, այս կերպով կը բերու-

նուի սոյն բանկը՝ դրամադիւն ստորագրվող անդերէն. ամենքը կուգին ունենալ 25 ֆրանկ-նոց անկիւն մը, կամ գէթ անոր մէկ մասն: Կոնգրէսի վերջին նիստին իմացուեցաւ թէ՛ մինչև ցարդ, եւսմեայ ստորագրութեան ի վեր, 32,000 իսրայելացիք ստորագրված են 4 միլիոն ֆրանկնոց անկիւններու համար: Արդարեւ, մեծ է բանկի վայելած ժողովրդականութիւնը հրէական մասնայի ամենախոր խաւերուն մէջ: Այնտեղ,—կասէ «Moniteur des Interets matériels»-ը—կայ հետաքրքրաշարժ օրինակ մը՝ համբարախօսեան, միութեան և ընկերային գործութեան: Ակարի

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դուլիստրիան, սեպտեմբերի 16-ին
Դուլիստրիան մի գեղեցիկ գիւղաքաղաք է՝ ընկած Ուրմիայի լճի արևելեան կողմում, Սուհուր սարի վերջերում, Թաւրիզից դէպի հարաւ՝ 8 մղոն հեռավորութեան վրա: Նշանաւոր է այս գիւղաքաղաքը հայ առևտրականներին մատուցած իր չոր մրգեղէններով—ծիրան, նուշ, պիստակ, սալոր, ալու (սալորի տեսակը), ընկույզ, սապաղ և այլ, որոնք բոլորն էլ մեծ քանակութեամբ արտահանվում են Ռուսաստան՝ հայ վաճառականներին միջոցով: Հայ վաճառականներն այստեղ գալիս են գլխաւորապէս ամառվայ վերջին երկու ամիսները, շատ քչերը միայն (աղուկեցիները) մնում են այստեղ մինչև ձմեռ:

Դուլիստրիանը ուսուպարական վերջին պատերազմից առաջ լի է եղել հայ բնակիչներով. սակայն այդ պատերազմից յետոյ բոլորովին ճնշվելով տեղական թուրք ազգաբնակչութիւնից՝ հայերը գաղթել են այդտեղից Պարսկաստանի դանազան կողմերը և Ռուսաստան, յիշատակ թողնելով միայն մի հնագոյարան խարիւր եկեղեցի, մի հանգստարան իր փոքրիկ պարտէզով, որը յետոյ թուրքերը զրաւեցին, և մի էջմիածնապատկան կալուածք—այդի:

Այստեղի թուրքերը համեմատաբար աւելի աշխոյժ են բան, օրինակ, Մարաղայինը, որովհետև այստեղ դեռ ևս այնքան շատ չէ տարածված աւերիչ աֆիոնը: Հիւսիսային կողմից աչքի է ընկնում Զարսու կոչվող մի քառանկիւն լարձը շինութիւն մի աղբիւրի վրա, որ մնացել է տաճիկների ժամանակից: Չինարիներ կան, որոնց մէջ խառնութիւն չինացի՝ պարագուտ են կոչուկարներ:

Գեղեցիկ բնութիւն ունի Դուլիստրիանը: Ազգաբնակչութիւն էլ առաջվանից շատ աւելի մեղմացել է. յամենայն դէպս, այստեղ հայերի բնակութեան, մասնաւոր գաղթականների համար շատ յարմար է, ինչպէս այդ մտածում էին դեռ ևս անցեալ տարի Թաւրիզի առաջնորդաբանում և դանազան անձինք: Լաւ բան կը լինէր անշուշտ, եթէ իրադրութիւնը այդ գեղեցիկ միտքը: Հողը խիստ պտղաբեր է:

Ա. Ասման

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ԱՍՏՐԱԽԱՆ, 3 հոկտեմբերի: Նախատար նաւերից մէկի վրա բանող մեքենայի կաթնան պայթեց: Այրվեց 7 նաւակ, 2 մեքենայ և 300 հազար պուր նաւթի մնացորդ, կան այրուածք ստացողներ: Վնասը հաշվում են 350 հազար բուրլ:

ՀՈՒՄ, 3 հոկտեմբերի: Չորս պետութիւնները վճեցին մերժել այն առաքելութիւնները, որ կան Բ. Կրան պատասխանի մէջ՝ կրեական հարցի մասին արված վերջնագրի վերաբերմամբ, և մի ծանուցալի ուղարկել սուլթանին, որի մէջ էլի մի անգամ յայտնել, որ թիւրքաց զօրքերը պէտք է թողնեն Կրեմէն օրոշեալ ժամանակամիջոցում:

ԿԱՆԵԱ, 3 հոկտեմբերի: Սուղի ծովածոցը եկան իտալական երկու զրահուոր: Թիւրքաց զօրքերն սկսեցին պատերազմական միջոցներն ու թնդանութիւնը Սուղի ծոցը տանել, ուր գալու են թիւրքաց փոխադրող նաւերը, որոնք արդէն դուրս են եկել Կ. Պօլսից: Որովհետև Բ. Կրանից առանց առաքելութիւնների պաշտօնական պատասխան չէ ստացված, միջազգային զօրքերը՝ աչքի առաջ ունենալով, որ հարկ կը լինի ուժակործութեան դիմել, պատերազմական միջոցները տեղափոխեցին Հալէպ. բնակիչներից թողած քաղաքի մէջ միայն մի փոքրիկ հիւրանոց է բաց: Բաղմաթիւ մահ-մեղականներ գնում են Աւստրիական Լոյդզ շոգինաւով:

ՊԱՐԻՑ, 3 հոկտեմբերի: Ներքին գործերի մինիստրութիւնը անպայման լուծութիւն է պահ-

պահում այն կարծեցեալ դաւադրութեան վերաբերմամբ, որի մասին գրում են լրագրները: Հաւատարմութեամբ են, որ զենեակաւ Նանուան, որ ժողովրդի էր Շոմոն գնալ, կը մնայ Պարիզում: Լուրերին նայելով քաղաքական գործիչները երէկ Բրիտանիոյ տունին փաստաթղթեր, ի թիւս որոց և մի ծածկագիր հեռագիր, որի նշանակութիւնն ու կարեւորութիւնը, սակայն, յայտնի չէ: Ուրիշ տեղեկութեան նայելով, ինչպէս վերաբերում է այն անգղիացի վարժարաններին մի քանի զենեակաւ կողմից, որոնք իրանց վրա յարձակութեանցները զայրացած, նամակներ մէջ իրանց անբաւականութիւնն են յայտնում:

ՊԱՐԻԶ, 3 հոկտեմբեր: Գաւառները եկած տեղեկութիւնները հաստատում են, որ երկաթուղիները բոլոր գծերը վրա հանգստութիւն է տրուում:

ԿՕՊԵՆՀԱՒԵՆ, 3 հոկտեմբեր: Բերնստորֆ ամբողջում հանգուցեալ թագուհու սենեակում իրօնական կարգը կատարելուց յետոյ, դադարը վերցրին թագաւորը, ռուսաց Կայսրը, յունաց թագաւորը, Դանիայի զահաժառանգ իշխանը և մի քանի անդամներ թագաւորական գերդաստանից, և տարան մինչև սպալանքը, որից յետոյ թագաւորական գերդաստանի բոլոր անդամները ստորով հետեցին մինչև հարեան երկաթուղու կայարան: Սպալանքից դադարը իջեցրին և տարան վագոն մի և նոյն Անձինք, որից յետոյ սպալանքից շարժվեց դէպի Բոսկիլլէ:

ՊԵՒԿԻՆ, 4 հոկտեմբեր: Ֆրանսիական դեսպանը պահանջեց անմիջապէս արձակել Սէյուս նահանգի ապստամբները ձեռքում գտնված Ֆրանսիացիներին և սպառնաց խիստ միջոցներ գործարարել: Բոլոր հրովարտականները հրատարակում են կայսրուհու անուանից, կայսրի իշխանութեան վերջին ստուերը ևս անհետացել է:

Կ. ՊՕԼԻՒՍ, 4 հոկտեմբեր: Ռուսական, անգլիական, ֆրանսիական և իտալական դեսպանները հաղորդեցին Բ. Գրան իրանց կառավարութիւնների որոշումն այն պատասխանի մասին, որ ստվարում տուել է պետութիւնների ուղղութեամբ: Մեծ պետութիւնները անպայման հաստատում են մնում ուղղութեամբ մէջ յայտնած պայմանները վրա, բայց հասկացնել են տալիս, որ պատրաստ են ապագայում մի քանի իշխաններ անել Բ. Գրան՝ Կրետէի վրա ունեցած ստվարութեան վեհապետական իշխանութեան նշանաբանը պահպանելու վերաբերմամբ:

ՊԱՐԻԶ, 4 հոկտեմբեր: Գիւնեալ Բուսկէօֆը, որ հրահանգ է պատրուել, վերահաստատեց ենթարկվել:

ԲՕՍԿԻԼԻՒՍ, 4 հոկտեմբեր: Սպառնացը հասաւ երեկոյեան ժամը 6-ին: Թագաւորը և միւս օգոստափառ անձինք տարան դադարը մինչև սպալանքը: Տաճար տանող ճանապարհը ծաղիկներով ծածկում էին սպառնաց տիկիները, սպալանքի ետևից գնում էին թագաւորը իր երեք աղջիկների հետ: Տաճարում պալատական քարուղի Պոսլի արտասանեց՝ հանդուգեալ թագուհու առաջուց յայտնած ցանկութեան համաձայն, մի կարծաթով, չորհակալութիւն յայտնեց ժողովրդին հանդուգեալ դանիական թագուհու անուանից այն հաւատարմութեան և սիրոյ համար, որ սա տաճար էր դէպ իր ամուսնու և ընտանիքը լաւ և վատ ժամանակներում. ապա դադար տարան Ֆրիդրիկ Վ-ի մատուռը՝ ուղեկցելով թագաւորական տան, օգոստափառ անձանց և օտար պետութիւնների ներկայացուցիչներին:

ՖԱԼՏՈՒՄ, 4 հոկտեմբեր: «Mohegan» շոգենաւը Լոնդոնից դէպի Նիւ-Եորկ գնալիս 200 ճամփորդներով խորտակվեց Լիզարդա հրուանդանի մօտ: Աղետովից միայն 31 մարդ:

ԿԱՅԻՐԷ, 4 հոկտեմբեր: Մարշալ ստացաւ Ֆաշողում ֆրանսիական կառավարութիւնից մի հեռագիր, և զրանից յետոյ ուղարկեց Վայրէէ մի օֆիցէր, որը արդէն հասել է Խարտում:

ՊԱՐԻԶ, 4 հոկտեմբեր: Ձխուորական դաւադրութեան մասին լուրերը շատ էլ չեն յուզում քաղաքական աշխարհը: Վերաքննութեան հակառակ լրագրները համարում են այդ դաւադրութիւնը միտաբխիկացիւ: «Figaro» հաստատում է, որ բոլոր գնեւորները իրանց պարտաւորութիւնն են համարում անպայման հնազանդել հանրապետական կառավարութեան: «Gaulois» ասում է, որ այդ մի դաւադրութիւն է առանց դաւադրիչների: Գաւադրութեան լուրը հաղորդող լրագրները պնդում են իրանց ասածի ճշգրտութեան վրա: «Petite République» նկատում է, որ պաշտօնական հերքում չէ եղել: «Petit Bleu» լրագրի ասելով, դաւադրութեան լուրը տարածվեց, երբ Դէրուէլը սկսեց պատերազմախրական քաղաքականութիւնը: Գնեւորները գումարվեցին

խորհրդի, Վադրամի սրահի ժողովից երեք օր առաջ և ուղարկեցին Բրիտանիա մի պատգամաւոր: Գործելու պրինց Վիկտորին վերջինիս տատանումներն ստիպեցին նրանց դիմել արեւմտը:

ԲԻՐԻՆՍԿ, 4 հոկտեմբեր: Հոկտեմբերի 3-ին ձիւն եկաւ: Ջրի աստիճանը + 2° է:

ԽԱՐԿՕՎ, 4 հոկտեմբեր: Ձիւնի բուք եղաւ և սաստիկ ցուրտ՝ մինչև չորս աստիճան: ԿԱՋԱՆ, 4 հոկտեմբեր: Գիշերը 10° ցուրտ էր, կէսօրին—5. սաստիկ ձիւն է և սաստիկ քամի:

ՍԻՄԲԻՐՍԿ, 5 հոկտեմբեր: Քաղաքի յօքելանի տօնախմբութիւնը կատարվեց մեծ հանդիսով:

ԿԻԵՎ, 5 հոկտեմբեր: Սաստիկ բուք է. սահնակներով են շրջում:

ԽԱՐԿՕՎ, 5 հոկտեմբեր: Ձիւնի սաստիկ բուրանն ազդում է գնացքների կանոնաւոր երթևեկութեան վրա:

ՊԱՐԻԶ, 5 հոկտեմբեր: Հիւսիսային երկաթուղու գծի վրա յանդարտ փորձ է երեւան հանված, այն է՝ Կուրնէֆ և Բուրէէ վոզգանների միջև եղած դիսկա լարերը կտրուված էին: Այլ մի դիսկալութիւն չը պատահեց: Բացի վոզգաններից՝ ամենուրեք քայքայած են զինուորական պահանջները. շատերը վերացված են: Զօրքերին տրված նրամանը՝ որպէսզի չը հեռանան զօրանոցներից, փոխված է:

ՋԻՐՈՒՏԻ, 5 հոկտեմբեր: Մի քանի ժամանակից ի վեր, Բաւ-Մանգալը, որ ղեկավարում է Տիգրէն, Մենելիքի իշխանութեան դէմ անհնազանդութեան նշաններ է ցոյց տալիս: Ենթադրում են որ Բաւ-Մանգալին դրդել են անգլիացիները: Նրան կարգի հրահրելու համար Մենելիքը սուրհարակ ուղարկեց նրա մօտ, բայց Մանգալը չը թաքցնէ նրան: Այդ պատճառով Մանգալի դէմ կազմակերպված է մի արշաւանք՝ բաղկացած 40,000 հոգուց, որի հրամանատարութիւնը կը յանձնվի Մակոնէնին: Մանգալի ձեռքի տակ միայն 10,000 զինուոր կայ: Ենթադրում են, որ Նեզուսի զօրքերին կաշտովի ճնշել ապստամբութիւնը, չը նայելով բերտանական ինտրիգներին:

ՊԱՐԻԶ, 5 հոկտեմբեր: Ռուսաց արտաքին գործերի մինիստրն եկաւ Պարիզ և կէսօրից յետոյ արտաքին գործերի մինիստրութեան մէջ երկար խօսակցութիւն ունեցաւ: Դերկաստի հետ: Երկուստեքի օրը՝ Դերկաստէ, ի պատու կոմս Մուրավյովի ճաշկերոյթ կը տայ:

ՋԱՆԻՒՍ, 5 հոկտեմբեր: «Հոսիցիլէն» նաւը պատեղից ճանապարհից դէպի Գարդանէլ. երեքշաբթի, առաւօտեան ժամը 9-ին, կը մօտենայ Կ. Պոլսին: Նկանակը լաւ է:

ՊԱՐԻԶ, 5 հոկտեմբեր: Նկողներին հոսանքը նոյնքան մեծ է, ինչպէս և ամառի կիրակի: Գաւառներից եկած հեռագիրները հաղորդում են, որ զօրքերը շարունակ հեռանում են կայարաններից:

ԱԼԷՔՍԱՆԴՐԻՍ, 5 հոկտեմբեր: Սրճարանում բռնկված ռումբերը՝ ենթադրութեան կարտանի նաւոր, որ այսօր ուղևորվում է Եգիպտոս: Զերբակալված ամբարխտները մէկը՝ վարձված էր ինչպէս ծառայ մի քանի օրանի համար, որ գտնուում է Երուսաղէմում:

ԲԵՐԼԻՆ, 5 հոկտեմբեր: Վերջին օրերը Ալեքսանդրիայում տեղի ունեցած ձերբակալութիւնների ժամանակ գտնվեցին ղոկուսներներ, որոնք ցոյց են տալիս, որ ծրագրված է եղել սպանել Վիլհելմ կայսրին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳԻ ԲՕՐՍԱ			
Հոկտեմբերի 2-ին			
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ	93	75	կ.
Բեռլինի վրա 100 մարկ	45	77	3/4
Պարիզի վրա 100 ֆրանկ	37	15	—
Պոլսի վրա 100 ֆրանկ	—	—	—
Մաքսիմիլիանի վրա 100 ֆրանկ	—	—	—
Բորսայի գնակներ	5	6	1/2
4% պետական բէնտ	101	1/8	—
5% ներքին փոխառութեան	100	3/8	—
4 1/2% զբաւ. լիզվ. արդ. բանկի	97	—	—
4 1/2% վկայակ. դեւ. հոլ. բանկի	100	—	—
Ներքին 5% առաջին փոխառութ.	294	1/2	—
Նոյն. երկրորդ	260	—	—
5% զբաւ. լիզվ. արդ. կալ. բանկի	218	—	—
5% պետական երկաթուղ. բէնտ	—	—	—
Պետերբ. քաղ. կր. ընկ. օբլ. 5%	—	—	—
Մոսկուայի քաղ. կր. օբլ. 5%	100	1/8	—
Օղէսայի —	100	1/8	—
Թիֆլիսի —	99	1/8	—
Թիֆլիսի կալ. բանկի 6%	—	—	—
Նոյնը — 5%	—	—	—
Քաւ. լիզվ. արդ. կալ. բանկի 6%	—	—	—
Նոյնը — 5%	—	—	—

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹՈՒՐ
Հրատ.՝ ԱՐԺՐՈՒՆԻ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1899 թ. ՇՈՅԻ ՕՐԱՅՈՅՑԸ

ՀԱՐՈՒՍՑ ԵՆԵՆԻՆԵՐԻ
ԵՐ ԵՐԱՅՈՅՑՆԵՐԻ

Ցանկացողները թող շտապեն մեզ յայտնելու, որպէսզի ժամանակին կարողանանք հասցնել:

Թիֆլիս՝ Մակար Չալկանի
(հ. չ.) 1—20

ԳՈՐԾԵԿԱՆՏԵՐ

ցանկանում է լինել մանուֆակտուրայի, վերահագործողի կամ գլխարկների խանութում: Արժեւորեալ քարվանսարա, ժամագործ Աստղեանի խանութում հարցնել Ա. Միրզախանին:

1—5

ТОВАРИЩЕСТВО
Брокеръ и К^о.
ИЗОБРАТЕЛИ
ГЛИЦЕРИНОВОЙ
ПУДРЫ.
СРЕДСТВО
ДЛЯ СМЯГЧЕНИЯ КОЖИ, РУКЪ И ЛИЦА.

Коробка 80 к. Коробка 50 к.

(ան. 6)

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Բաղկացած 951 հատոր հայերէն, ռուսերէն և գերմաներէն գրքերից: Հասցէն՝ Երկաթուղային կայա փողոց, տուն № 45:

1—5

ԲԺՇԿԱԴԵՏ Ե. Ի. ՖՐԱՆՏԻՍԻՍ

ճանապարհի կողքին, քիչ և ակնհայտ հիւանդութիւնների:

Ընդունում է 5—7 ժամը երեկոյեան. Վեխամի-նովկայա փողոց, տուն № 4, Դոմայի հանդէպ:

(հ. չ. ".) 15—30

ԹԻՖԼԻՍԻ ԶԻԱՔԱՇԻ ԳՈՐԾԱԴՐԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

հրահրում է այն անձանց, որոնք կը կամենան ծառայել քաղաքային ձեռքաշի բաժնում, այդ ժամին յայտնել մինչև ներկայ տարւոյ հոկտեմբերի 15-ը: Ցայտարարվում է, որ այն անձանց՝ որոնք առաջ ծառայել են ձեռքաշի վրա, առաւելութիւն կը տրվի: Ներկայ տարւոյ հոկտեմբերի 16-ից ինչպիսիքներ ընդունելութիւնը կը դադարեցնվի և քաղաքային ձեռքաշի շտապը կը լրացնվի այն անձինքներով, որոնք անունները կան յանձնաժողովի ցուցակի մէջ: Ցայտարարութիւններ ընդունվում են ուղարկայի Շինարարական բաժնում, ուղարկայի անդամ Վերմիշիկի ձեռքով:

1—3

ՎԱՐԺԱՐԱՆ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԻԻԹԱՐԵԱՆՆԵՐՈՒ

Վարժարանը վերստին բացուեցաւ ի Կ. Պոլսի սեպտեմբեր ամսին սկիզբը: Վարժարանիս ծրագիրը կը համապատասխանէ՝ գերմանական բէալգիմա գիւղում ծրագրին: Պարտաւորիչ լիզանքն են հայերէն, գերմաներէն, զաղերէն (իսկ տաճկերէնը միայն տաճկահայոց համար): Իսկ անգլիերէնն ու ռուսերէնը կամաւոր են: Ընդունվին գիշերօթիկ, ցերեկօթիկ և արտաքին աշակերտներ: Գիշերօթիկները կը վճարեն տարեկան 260 րուբլի թոշակ. զրքերու, դասական պիտոյից և համազգեստի համար՝ 60 րուբլի: Իսկ վաղանիս՝ յուլիս և օգոստոս ամիսներն ալ վարժարանին մէջ մնալ ցանկացող աշակերտները՝ 100 րուբլի աւելի կը վճարեն: Համադրմամբ 420 րուբլի: Ցերեկօթիկ աշակերտաց թոշակն է՝ 150 րուբլի + 60 = համադրմամբ՝ 210 րուբլի: Իսկ արտաքին աշակերտները կը վճարեն 90 րուբլի: Ընդարձակագոյն տեղեկութեանց համար դիմել ի Կ. Պոլսի, Վ. Հ. Գաբրիէլ Վ. Մէնէլիչեանին, Վարչին, հետեւեալ հասցէի. Ecole des PP. Méchitharistes de Vienne à Constantinople, Pancaldi.

2—5

Լ Ո Յ Ս Տ Ն Ս Ա Ւ

ԼԵՕ

Մ Է Լ Ի Ք Ի Ա Ղ Ձ Ի Կ Ը

(Պատմական վէպ, 755 երես)

Գիրք 1 ԲՈՒԲ. 30 ԿՕՊԵԿ (ուկեղազմ 2 րուբլի)

Ծախվում է ԹԻՖԼԻՍԻՄ—հեղինակի մօտ (Մշակի) խմբագրատանը և Կենտրոնական գրա-վաճառանոցում: ԲԱԳԻՈՒՄ—պ. Ներսէս Դաւթեանցի մօտ, Ա. Ի. Աղամօլի գրասենեակ. ՇՈՒՇՈՒՄ—Բազարա Տէր-Սահակեանցի գրավաճառանոցում:

Հեղինակի հասցէն՝ **ТИФЛИСЪ, редакція „Мшакъ“.** 10—10

ԳՐԻԳՈՐ ԱՐԺՐՈՒՆԻ

Է Վ Ե Լ Ի Ն Ա

(Հոգեբանական էսէիզ)

ԳԻՆԸ 50 ԿՕՊԵԿ

Ծախվում է Մշակի խմբագրատանը 7—10

ՇԱՐԻՆԱԿՎՈՒՄ Է

Ազգագրական Հանդիսի

ԲԵՓՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս է տեսել № 1, իսկ № 2 Լոյս կը տեսնի ղեկոնակներին:

Բաժանորդագիրն է՝ 3 ր.

Դիմել՝ Ерванду Лалаянъ. Тифлисъ, Семинарія Нерсисянъ. (հ. չ.) 8—10

ԲԺ. ՎԱՆՆԱՆ ԱՐԺՐՈՒՆԻ

Վերադառնալով արտասահմանից վերսկսել է հրահրել ընդունելութիւնը մասնագիտաբար բոլի, կոկորդի, քիւի և ականջի հիւանդութիւնների համար՝ առաւօտեան 9—12 ժամը, երեկոյեան 4—7 ժ. Դոլովիսկի պրոսպ. № 28, տ. Աղամօլի:

2—10

ԹԻՖԼԻՍԻ ՀՆՅՈՑ ՀՐԵՏԱՐԱՆՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵՆ

Գրասենեակում վաճառվում են՝

Բ. Կ.

Ա.ԳԱՐԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՈՒԹԻՒՆԸ . . . 1 »

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՏԱՐՈՆԵՑՈՒ ՊԱՏՈՒԹԻՒՆ . . . 2 »

ԹԻՖԼԻՍԵՑՈՆ ՄՏԱԽՈՐ ԿԵՆՏՐԸ . . . 1 50

ՂԵՆՈՒՆ ՊԱՏՈՒԹԻՒՆ . . . 2 »

ԴԱՍԱԳԻՐԻ ԿՐՈՒՆ ՈՍՏՈՅԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ . . . 1 75

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Դարակի . . . 1 25

ՀԱՆՐԱՄԱՏՆԵՐԻ ԲՆԱԾՈՒԹԻՒՆ ԼՈՒՆ-կիւի . . . 1 »

ՀԱՆՐԱՄԱՏՆԵՐԻ ԱՍՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ Ֆը-լամարի . . . 1 »

ԳՆՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Դա-րագրան . . . 4 »

ՊԱՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, Պալատանան . . . 1 50

Ա.ԿՆԱՑ ՀՆՈՒԹԻՒՆԻ, Զանիկեան . . . 2 »

ՄԱՆԱԿԱՆ ԼՕՏՈ, (հայ., ռուս., ֆրանսե-րէն և վրացերէն) . . . 1 20

Ա.ԶԳԱՅԻՆ ՋՕՆԵՐ, Պարսեան . . . 1 »

ԴԱԻԹ ԿՕՊԵՐՖԻԼԻ, Դիկեան . . . 1 »

ՎԷՊԻԿԵՆԻ և ԶՐՈՅՆԵՐ, Մօլաան . . . 1 »

ՅՈՒՆԻՍ, Անիկեի . . . 1 50

ՄԱԼԻ ԵՄ, Էրեան . . . 1 »

Դիմել՝ Тифлис. Типографское Общес. Изд. Арм. книгъ. 5—15